

Օ. Խ. Կարճիկյան

ԿՈՆՏԻՆԵՍԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման հարցը ժողովրդատնտեսական մեծ կարևորություն է ներկայացնում և հսկայական նշանակություն ունի կոլտնտեսային արտադրության համար:

ՄՄԿՊ XXI արտահերթ համագումարում «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին» իր զեկուցման մեջ, մեծ նշանակություն տալով գյուղատնտեսության արտադրանքի ինքնարժեքի իջեցման հարցին, ընկեր Ն. Ս. Խրուշչովը ասաց. «Գյուղատնտեսության մեջ առավել կարևոր խնդիրներից մեկը աշխատանքի արտադրողականության բարձրացումը և գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցումն է: Անհրաժեշտ է ապահովել համախառն արտադրանքի զգալի աճ, նվազեցնելով նրա արտադրության համար աշխատանքի ու միջոցների ծախսումը»:

Մինչև 1955 թ. տնտեսագիտությունը քիչ էր զբաղվում կոլտնտեսությունների արտադրական ծախսումները և արտադրանքի ինքնարժեքը որոշելու հարցերով: Տնտեսագետների շրջանում տարածված էր այն կարծիքը, թե կոլտնտեսային արտադրության մեջ, ղլխավորապես աշխատավարձի և որոշ մթերքների պրամական գնահատության բացակայության պատճառով, ինքնարժեքը հաշվարկելու հնարավորություն չկա:

Այժմ այդպիսի հաշվարկման անհրաժեշտությունն ու հնարավորությունը տրեք մեկի տարակուսանք չի հարուցում: Տնտեսագիտական գրականության մեջ երևան են եկել շատ հոգվածներ, որոնք տարբեր հայացքներ են պարունակում կոլտնտեսությունների արտադրության ծախքերի հաշվարկման պրոբլեմի վերաբերյալ: Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում կոլտնտեսություններում կենդանի աշխատանքի վարձատրումը գնահատելու հարցը: Գոյություն ունի այդպիսի գնահատման երկու հիմնական մեթոդ՝ ըստ կոլտնտեսականների աշխատանքի հասարակականորեն չափելի պայմանական վարձատրության և ըստ փաստական վարձատրության:

Արտադրանքի ինքնարժեքը որոշելու ճիշտ մեթոդիկա սահմանելու տրոշ դժվարությունները և այդ հարցի շուրջը եղած տարբեր կարծիքները զգալի չափով առաջանում են այն կապակցությամբ, որ առանձին հեղինակներ փորձում են գտնել միասնական մեթոդիկա, որը լիովին համապատասխաներ ինքնարժեքի՝ որպես տնտեսական կատեգորիայի հասկացությանը և միևնույն ժամանակ ընդունելի և գործնականորեն օգտակար լիներ կոլտնտեսությունների համար:

Կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշն անհրաժեշտ է ինչպես համապետական ժողովրդատնտեսական խնդիրների լուծման՝ գյուղատնտեսական մթերքների պետական, ըստ գոտիների դիֆերենցացված գները հիմնավորելու և գյուղատնտեսությունը արտադրության տնտեսական արդյունավետության տեսակետից ևրկրի տերիտորիայում ճիշտ տեղաբաշխելու ու

մասնագիտացնելու համար, այնպես էլ ներկուտնտեսային տնտեսական հաշվարկ մտցնելու և պլանային ինքնարժեքը յուրաքանչյուր կուտնտեսությունում որոշելու համար: Բացի դրանից, գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի տվյալները կարող են օգտագործվել տարբեր կուտնտեսությունների տնտեսական գործունեության համեմատական բնութագրման և նրանց էկոնոմիկայի զարգացման մի շարք տարիների դինամիկան ուսումնասիրելու ժամանակ:

Ինքնարժեքի հաշվարկումը հնարավորություն է տալիս հայտնաբերել աշխատանքի տեղիքների ծախսման անբարենպաստ բնագավառները և դրա շնորհիվ ձեռնարկել միջոցառումներ արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու համար:

Արդյոք կարող է հաշվարկման միասնական մեթոդիկա լինել մատնանշված բոլոր նպատակների համար: Ակներև է, որ ոչ:

Կուտնտեսությունների արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումը, որը նպատակ ունի օգնելու գյուղատնտեսական արտադրանքի գները որոշելու և կարգավորելու հարցերի լուծմանը, դրանք համապատասխանեցնելու արժեքային հարաբերություններին և մշակելու գյուղատնտեսական արտադրության առավել նպատակահարմար տեղաբաշխում, պետք է խստորեն հենվի ինքնարժեքի քաղաքատնտեսական հասկացության վրա, մինչդեռ անմիջականորեն առանձին կուտնտեսությունների տնտեսական գործունեությանը վերաբերող հարցերում այդ տեսակետից թույլատրելի են որոշ շեղումներ, որոնք հնարավորություն են տալիս որոշելու յուրաքանչյուր կուտնտեսության արտադրանքի անհատական ինքնարժեքը:

Ինչպես հայտնի է, արտադրանքի ինքնարժեքը գոյանում է երկու մասերից՝ արտադրության ծախսված միջոցների մեջ մարմնացած իրաչնացած աշխատանքի արժեքից և անհրաժեշտ աշխատանքով ստեղծված արդյունքի արժեքից: Իսկ էթե վերջինին ավելացնենք արդյունքի արժեքի այն մասը, որն ստեղծված է հասարակության համար հավելյալ աշխատանքով, ապա կստացվի նոր ստեղծված արդյունքի արժեքը:

Արդյունաբերական և գյուղատնտեսական պետական ձեռնարկություններում անհրաժեշտ աշխատանքով ստեղծված արդյունքը բանվորներն ստանում են աշխատավարձի ձևով: Սովորաբար տրվող աշխատավարձն արտացոլում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի վարձատրման հասարակականորեն անհրաժեշտ միջին մակարդակը: Կուտնտեսություններում աշխատանքի դիմաց տրվում են աշխուրներ, որոնք լինելով հանրային տնտեսության մեջ աշխատանքի ծախսման չափանիշ, միաժամանակ որոշում են յուրաքանչյուր կուտնտեսականի բաժինը կուտնտեսությունների եկամուտների մեջ: Այս կամ այն ճյուղում ծախսված աշխուրի վարձատրման չափի վրա ուղղում է հաև լրացուցիչ վարձատրությունը, որը կապված է կուտնտեսականների նյութապես խթանելու հետ:

Եկամուտները բաշխելիս շատ կուտնտեսություններում աշխուրի վարձատրման մեջ է մտնում կուտնտեսականների հավելյալ աշխատանքով ստեղծված արդյունքի, այսինքն՝ զուտ եկամուտի և դիֆերենցիալ ունեության մի մասը: Իսկ այն կուտնտեսություններում, որտեղ աշխատանքի արտադրողականությունը ցածր է և եկամուտը համեմատաբար քիչ է, աշխուրների վճարումը ցածր կլինի, և առանձին դեպքերում աշխատանքի վարձատրությունը նույնիսկ չի

հատուցի կոլտնտեսականի աշխատուժի ծախսումը: Երկու դեպքում էլ աշխատանքի վարձատրությունը չի համապատասխանի տվյալ ժամանակաշրջանում գյուղատնտեսության մեջ աշխատանքի վարձատրման հասարակական միջին մակարդակին: Այսպիսով, կոլտնտեսականների աշխատանքի ըստ աշխօրերի փաստական վարձատրումը չի կարող մտցվել ինքնարժեքի մեջ որպես անհրաժեշտ աշխատանքով ստեղծված արդյունքի արժեք:

Որոշ տնտեսագետներ, հենվելով սոցիալիստական էկոնոմիկայի այն ընդհանուր օրինաչափության վրա, ըստ որի բնակչության նյութական բարեկեցության վերելքը մեզ մոտ տեղի է ունենում աշխատանքի արտադրողականության աճման արագ տեմպերի հաշվին, պնդում են, թե կոլտնտեսականների աշխատանքի ըստ աշխօրերի վարձատրման աճը միաժամանակ չի կարող բարձրացնել արտադրանքի ինքնարժեքը: Սակայն կոլտնտեսային արտադրության պրակտիկայում դժվար չէ գտնել օրինակներ, երբ անձնական սպառման ֆոնդի աճը գերազանցում է աշխատանքի արտադրողականության աճումից: Այստեղից բխում է, որ աշխօրի վարձատրման տարբերությունը կարող է՝ ազդել կոլտնտեսականների փաստական վարձատրմամբ որոշվող արտադրանքի ինքնարժեքի վրա: Աշխատանքի վարձատրման չափից ինքնարժեքի ունեցած կախումը կարելի է տեսնել Հոկտեմբերյան շրջանի երկու կոլտնտեսությունների օրինակից: Արևիկ գյուղի կոլտնտեսությունում աշխատանքի վարձատրությունը, հաշվարկված աշխօրերն ըստ 1957 թ. փաստական վարձատրման, դրամական արժեքի վերածելով, կազմել է աշխօրին 13,5 ռ., մեկ ցեխտներ խաղողի վրա ծախսվել է 6,8 աշխօր և 27,7 ռ. դրամա-նյութական միջոցներ, մեկ ցեխտներ խաղողի ինքնարժեքը կազմել է 119,5 ռ.: Տանձուտ գյուղի կոլտնտեսությունում համապատասխանորեն՝ 29,5 ռ., 4,1 աշխօր, 9,4 ռ. և 130,3 ռ.: Երկրորդ կոլտնտեսությունում մեկ ցեխտներ խաղողի ինքնարժեքը 9,0 տոկոսով բարձր է առաջին կոլտնտեսության համեմատությամբ: Մինչդեռ Տանձուտ գյուղի կոլտնտեսության արտադրանքի մեկ միավորի վրա ավելի քիչ աշխատանք ու դրամա-նյութական միջոցներ են ծախսել, քան Արևիկ գյուղի կոլտնտեսությունում: Նման դրույթյան տնտեսական անհարիրությունն ակներև է:

Այդպիսի դրությունից խուսափելու համար առանձին հեղինակներ հանձնարարում են կոլտնտեսության արտադրանքի ինքնարժեքը հաշվարկել ոչ թե փաստական վճարումներով, այլ շրջանի, մարզի կամ ռեսպուբլիկայի միջին վճարումներով: Աշխօրերի բարձր ու ցածր վճարումների համահարթման այդ մեթոդի կողմնակիցները, հեռանալով կոլտնտեսության արտադրանքի անհատական ինքնարժեքը որոշելու եղանակից, չեն հանգում նաև աշխատանքի ծախսումները ըստ հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի միջին վարձատրման գնահատելու մեթոդին: Առանձին դեպքերում շրջանում կամ ռեսպուբլիկայում աշխատանքի փաստական միջին վարձատրման մերձեցումը հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի միջին վարձատրմանը, իհարկե, չի կարող տնտեսագիտական հիմնավորում ծառայել այդպիսի մեթոդի ճշտությունն ընդունելու համար:

Այսպիսով, համապետական տնտեսական պրոբլեմների լուծման, ինչպես և առանձին կոլտնտեսությունների էկոնոմիկայի համեմատական բնութագրման համար անընդունելի է կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքի այն հաշվարկումը, որի դեպքում աշխատանքի վարձատրման ծախսումները գնահատվում են ըստ կոլտնտեսականների աշխօրերի փաստական վճարման, Հե-

տեապես, այստեղ պետք է կիրառվի աշխատանքի վարձատրման վրա կատարվող ծախսումների գնահատման այնպիսի մեթոդ, որը համապատասխաներ աշխատանքի հասարակականորեն անհրաժեշտ ծախսումներին և շուփելի լիներ մի քանի կոլտնտեսությունների կամ մի կոլտնտեսության համար մի շարք տարիների ընթացքում: Այդպիսի պայմանական գնահատում կարող է լինել սովխոզների բանվորների միջին աշխատավարձը:

Եթե խաղողի ինքնարժեքը վերահիշյալ երկու կոլտնտեսություններում հաշվարկենք ըստ Արարատյան դաշտի սովխոզների բանվորների միջին աշխատավարձի, աշխատանքի մարդ-օրը 17,3 ռ., ապա ինքնարժեքի համեմատական ցուցանիշները բոլորովին այլ կլինեն, քան ավելի առաջ բերվածները: Արևիկ գյուղի կոլտնտեսությունում ինքնարժեքը կկազմի 157,7 ռ., իսկ Տանձուտ գյուղի կոլտնտեսությունում՝ 88,0 ռ., այսինքն 44,3 տոկոսով ցածր, քան առաջին կոլտնտեսությունում: Այդ ցուցանիշներն արդեն ճիշտ կերպով արտացոլում են կենդանի և իրայնացրած աշխատանքի այն ծախսումները, որ կատարվել են հիշյալ կոլտնտեսությունների արտադրանքի մեկ միավորի վրա:

Կան տնտեսագետներ, որոնց կարծիքով կոլտնտեսություններում աշխատանքի հասարակականորեն անհրաժեշտ ծախսումները կարելի է արտահայտել կոլտնտեսականների աշխատանքի երաշխավորված վարձատրման մակարդակի ցուցանիշով: Սակայն աշխատանքի այդպիսի երաշխավորված վարձատրում գոյություն ունի միայն առանձին կոլտնտեսություններում: Ինչ վերաբերում է կոլտնտեսականների ամենամսյա ավանսավորմանը, ապա այս վերջինը սոսկ առաջին մոտեցումն է աշխատանքի երաշխավորված վարձատրման հասկացությանը: Բացի դրանից, ավանսավորումը կիրառվում է դեռևս սահմանափակ թվով կոլտնտեսություններում և նրանց մեծ մասում դեռ հեռու է հասարակականորեն անհրաժեշտ ծախսումների մակարդակից: Ուստի կոլտնտեսային արտադրանքը հաշվարկելիս կենդանի աշխատանքի գնահատման այդպիսի մեթոդը ներկայումս չի կարող ընդունվել:

Սովխոզների բանվորների միջին աշխատավարձի հիման վրա կոլտնտեսականների աշխատանքի ծախսումները գնահատելիս առաջ են գալիս որոշ դժվարություններ, որոնք կապված են կոլտնտեսականների աշխօրերը մարդ-օրերի վերածելու անհրաժեշտության հետ:

ՍՍՌՄ Կենտվիճվարը, ՍՍՌՄ Գյուղատնտեսության մինիստրությունը և Գյուղատնտեսության էկոնոմիկայի Միությունական գիտահետազոտական ինստիտուտը հանձնարարել են կոլտնտեսություններին 1958 թ. արտադրանքի ինքնարժեքը հաշվարկել սովխոզների տարիֆային գնահատումներով: Այդ ձևով աշխօրերը գնահատելը, բացի իր բարդությունից, նորմատիվ է և ունի այն թերությունը, որ հաշվի է առնում կոլտնտեսականների աշխատանքի ոչ փաստական ծախսումները: Առանձին գոտիներում, շրջաններում և կոլտնտեսություններում աշխօրերը Կենտվիճվարչության միասնական դորժակիցով մարդ-օրերի վերածելու նպատակահարմարությունը նույնպես որոշ կասկած է հարուցում՝ ըստ շրջանների ու կոլտնտեսությունների վերաժման դորժակիցների տարբերության կապակցությամբ:

Ըստ երևույթին, առավել ճիշտ է կոլտնտեսային արտադրության հիմնական ճյուղերում կոլտնտեսականների աշխատանքի դուրս դալու օրերը (ավելի ճիշտ՝ լրիվ մարդ-օրերը) կոլտնտեսության փաստաթղթերով ուղղակի հաշվելու մեթոդը:

ՍՍՌՄ Գյուղմիջինատնտեսությունը որոշ քայլ կատարել է աշխատաժամանակի ծախսումներին վերաբերող հաշվառումն ու հաշվետվություններ բարելավելու գործում: Կոլտնտեսության տարեկան հաշվետվությունում այժմ հաշվի է առնվում կոլտնտեսականների՝ աշխատանքի դուրս գալու օրերի թիվը, բուսաբուծության գծով ամբողջովին առած և անասնաբուծության գծով բուսականացման առանձին տեսակների Սակայն դա դեռևս բավական չէ: Անհրաժեշտ է բուսաբուծության մեջ կատարված աշխատաժամանակի ծախսումները ցույց տալ ըստ առանձին, զոնե հիմնական ճյուղերի, իսկ աշխատանքի դուրս գալու օրերի հաշվառումը փոխարինել լրիվ մարդ-օրերի հաշվառումով:

ՍՍՌՄ Գյուղատնտեսական միջինատնտեսության կողմից առաջարկված կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման մեթոդիկան հիմնականում համապատասխանում է վերևում նշված ժողովրդատնտեսական պրոբլեմների լուծման ու տնտեսական անալիզի համար անհրաժեշտ համեմատելի ցուցանիշներ ունենալու պահանջին: Սակայն այդ ձևով հաշվարկված ինքնարժեքը չի կարող ծառայել կոլտնտեսության ներտնտեսական հաշվարկներ կատարելու նպատակին:

Արտադրանքի ինքնարժեքի սահմանումը, որ կոլտնտեսություններին անհրաժեշտ է ներտնտեսական հաշվարկ կազմակերպելու համար, պետք է կատարվի ըստ աշխատանքի փաստական վարձատրման: Աշխօրերի փաստական վարձատրման հաշվառումը անհրաժեշտ է կատարել միասնական դրամական արտահայտությամբ, քանի որ ինքնարժեքը ամենից առաջ այս կամ այն պրոդուկտի արտադրման վրա կատարված ծախսումների դրամական արտահայտությունն է: Հարց է ծագում՝ ի՞նչ գներով հաշվի առնել կոլտնտեսականներին տրված բնավճարումները: Շատերն առաջարկում են բնավճարումները գնահատել պետական գներով, իսկ ուրիշները՝ պետական մանրածախ առևտրի գներով: Կոլտնտեսությունների ապրանքային արտադրանքի հիմնական զանգվածն իրացվում է գնման գներով, տատի և այդ գները կարծես թե ամենից ավելի հարմար են կոլտնտեսություններին տրված բնավճարումների հաշվառման համար: Սակայն պետք է հաշվի առնել հարցի նաև մյուս կողմը: Ինքնարժեքը հասարակական-տնտեսական կատեգորիա է, որի մեջ մտնում է անհրաժեշտ աշխատանքով ստեղծված արդյունքի արժեքը: Արտահայտվելով դրամական ձևով, վերջինը պետք է ծածկի աշխատուժի հասարակականորեն անհրաժեշտ ծախսումները: Այդ ծախսումները բանվորը հատուցում է պետական մանրածախ գներով սննդամթերքներ և սպառման այլ առարկաներ ձեռք բերելու միջոցով: Այս դրությունը լիովին վերաբերում է նաև կոլտնտեսականներին, սրտնք իրենց հարկավոր սպառման առարկաների մի մասը ոչ թե ձեռք են բերում, այլ աշխօրը վարձատրելիս ստանում են բնավճարի ձևով: Ուստի ճիշտ կլինի այդ վճարումները գնահատել պետական մանրածախ գներով:

Արտադրանքի ինքնարժեքի սահմանումը անշուշտ հսկայական նշանակություն ունի կոլտնտեսությունների ներտնտեսական հաշվարկումների համար: Եվ այդ տեսակետից ակներև է այն, որ ինքնարժեքը անհրաժեշտ է հաշվարկել հաշվի առնելով աշխատանքի ծախսումների գնահատումը ըստ կոլտնտեսականների աշխատանքի փաստական վարձատրման: Սակայն կոլտնտեսային կարգի զարգացման ներկա էտապում կոլտնտեսություններն աշխատելով կարող են սահմանափակվել միայն այդ տվյալներով: Կարծում ենք, որ ոչ պակաս կոլտնտեսային կարգի հետագա զարգացման և մեքենատրակտորային կայանների զե

րակազմելու վերաբերյալ ՍՄԿՊ Կենտկոմի 1958 թ. փետրվարյան պլենտմի որոշման կապակցությամբ ծագել են կոլտնտեսային եկամուտների բաշխմանը վերաբերող նոր հարցեր:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի հինգերորդ գումարման առաջին սեսիայում տված իր զեկուցման մեջ ընկ. Խրուշչովն ասել է. «Այժմ, երբ մենք անցնում ենք կոլտնտեսային կարգի վարձացման նոր աստիճանի, երբ արտադրության բոլոր գործիքների տերը կլինեն իրենք կոլտնտեսությունները, կպահանջվի փոխել եկամուտներն ըստ աշխօրերի և անբաժանելի ֆոնդերի բաշխելու հարաբերակցությունը»:

Այնուհետև ընկ. Ն. Ս. Խրուշչովը խոսել է ըստ աշխատանքի քանակի ու որակի բաշխելու սոցիալիստական սկզբունքի և կենսական բարիքներն աշխատավորներին միջև ճիշտ բաշխելու մասին, այն մասին, որ կան կոլտնտեսություններ, որոնք աշխօրին տալիս են 40—50 ռուբլի, իսկ անբաժանելի ֆոնդերին հատկացնում են եկամտի միայն աննշան մասը: «Կոլտնտեսություններն ու պարտիական կազմակերպությունները պետք է ապահովեն եկամուտների այնպիսի բաշխում, որի դեպքում աշխօրի վարձատրությունը համապատասխաներ երկրի էկոնոմիկայի զարգացման մակարդակին: Առաջավոր կոլտնտեսություններում այդ վարձատրությունը, բնականաբար, մի փոքր բարձր կլինի, քան միջին կոլտնտեսություններում, բայց չպետք է չափից ավելի առաջ անցնի, այլապես կարող է խախտվել նյութական բարիքներն արդարացիորեն բաշխելու սոցիալիստական սկզբունքը:

Այն կոլտնտեսությունները, որոնք բարձրացել են ... չպետք է թվաբանական եղանակով եկամուտները բաժանեն ըստ աշխօրերի: Այդ կոլտնտեսություններում եկամուտների ավելի նշանակալի մասը պետք է տալ անբաժանելի ֆոնդերին»:

Կոլտնտեսությունների սպառման ֆոնդի և անբաժանելի ֆոնդերի միջև եկամուտների բաշխման ճիշտ հարաբերակցություն գտնելու համար կոլտնտեսությունները պետք է ունենան աշխատանքի ծախսումների զնահատականների տվյալներ ոչ միայն ըստ կոլտնտեսականների փաստական վարձատրման, այլև ըստ գյուղատնտեսական աշխատանքի օբյեկտիվ պետական զնահատման: Դա հնարավորություն կտա զուգահերելու այդ երկու մեծությունները և պարզելու, թե ինչ չափով կոլտնտեսությունների աշխատանքի վարձատրությունը համապատասխանում է հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի ծախսումների արժեքին:

Բացի դրանից, տնտեսապես հզոր և կազմակերպորեն ամուր կոլտնտեսությունները հնարավորություն ունեն ավելի խոր ու լայն կերպով զբաղվելու իրենց տնտեսության էկոնոմիկայով: Կոլտնտեսությունների գործունեության վերլուծությունը առաջին հերթին պահանջում է ըստ տարիների համեմատորեն բնութագրել տնտեսական ցուցանիշները և ամենից առաջ այնպիսի ցուցանիշ, ինչպես գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի մակարդակը: Անհրաժեշտ է համեմատություններ անել նաև հարևան, հատկապես առաջավոր կոլտնտեսությունների հետ և այլն: Այդպիսի համեմատություններ կարող են արվել միայն այն դեպքում, եթե ինքնարժեքը հաշվարկված է չափակցելի ցուցանիշներով:

Ամբողջ վերոգրյալը բերում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումները կատարել երկու եղանակով՝ աշ-

խառանքի ծախսումները զնահատելով ըստ փաստական վարձատրման, այսինքն ըստ անհատական ինքնարժեքի և ըստ սովխոզի բանվորների միջին աշխատավարձի, որն արտացոլում է գյուղատնտեսության մեջ աշխատանքի վարձատրման հասարակականորեն անհրաժեշտ մակարդակը:

Արտադրանքի ինքնարժեքը երկու եղանակով որոշելը կոլտնտեսություններում լրացուցիչ մեծ հաշվարկումների տեղիք չի տա: Հողային օրգանները կարող են ըստ գյուղատնտեսական գոտիների, փսկ որտեղ հարկավոր է՝ նաև ըստ շրջանների պարզել սովխոզների բանվորների աշխատավարձը և հայտնել կոլտնտեսություններին: Վերջիններն ըստ առանձին ճյուղերի պետք է կատարեն լրիվ մարդ-օրերի հաշվում և զնահատեն դրանք ըստ սովխոզների միջին աշխատավարձի: Արտադրության դրամական-նյութական ծախքերի չափը երկու ցուցանիշներով միատեսակ կլինի:

Համեմատության համար կոլտնտեսություններին անհրաժեշտ է ունենալ անցյալ տարիների արտադրանքի ինքնարժեքի տվյալները, ուստի հարկ ենք համարում հակիրճ հիշատակել նաև ՄՏԿ-ների կատարած աշխատանքների գնահատման հարցի մեթոդիկան:

ՄՏԿ-ների ծախսումների գնահատման հարցը, ինչպես և կենդանի աշխատանքի ծախսումների գնահատման հարցը, պետք է լուծվի՝ նայած թե ինչ նպատակով և ով է հաշվարկում տվյալ ինքնարժեքը: Եթե ինքնարժեքի սահմանումը կապված է արդեն հիշատակված համապետական խնդիրների հետ, ապա այդ դեպքում ճիշտ կլինի, որ ինքնարժեքի մեջ մտցվեն ՄՏԿ-ների և կոլտնտեսությունների միատեղ ծախսումները, քանի որ ՄՏԿ-ների բնավարձի մեջ, բացի պետության կատարած ծախսերի հատուցումից, մտնում է նաև կոլտնտեսության զուտ եկամտի մի որոշ մասը, որ ստեղծված է կոլտնտեսականների հավելյալ աշխատանքով:

Կոլտնտեսությունների և ՄՏԿ-ների արտադրանքի ամբողջ ինքնարժեքը տնտեսական մի այնպիսի կատեգորիա է, որը հաշվի չի առնում կոլտնտեսության կողմից պետության ծախսումների իրական հատուցման չափերը և նրան հանձնվող զուտ եկամտի մասը: Ուստի այս ցուցանիշը չի կարող օգտագործվել ներտնտեսական հաշվարկումների և տնտեսության ճյուղերի եկամտաբերությունը որոշելու համար: Արտադրանքի ինքնարժեքը որոշելիս կոլտնտեսությունները ՄՏԿ-ների աշխատանքի համար տրվող վարձատրությունը պետք է մտցնեն իրենց արտադրության ծախքերի մեջ:

Առանձին մթերքների ինքնարժեքը հաշվարկելու համար կարևոր նշանակություն ունի աշխատանքի և միջոցների ծախսումների ճիշտ տարածումը հիմնական և զուգորդվող արտադրանքի վրա: Դա առանձնապես վերաբերում է անասնաբուծության արտադրանքին՝ միսը և կաթը խոշոր եղջերավոր անասունների գծով, լուրդը, միսը և կաթը ոչխարաբուծության գծով և այլն: Կոլտնտեսությունների համար առավել ընդունելի է ծախսումները արտադրանքի տեսակների վրա տարածելու մեթոդը, համաձայն որի արտադրանքի տեսակների կշիռը տվյալ ճյուղի ընդհանուր արտադրանքի մեջ որոշվում է պետական միասնական գնման գներով: Այս մեթոդը մեծ ճշգրտությամբ աչքի չի ընկնում, բայց կապված չէ բարդ հաշվումների հետ, որի հետևանքով և հանձնարարվել է կոլտնտեսություններին:

ՍՍՌՄ Գյուղատնտեսության մինիստրությունը, առաջարկելով կոլտնտեսությունների 1958 թ. արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման մեթոդիկան,

միաժամանակ հանձնարարել է գիտահետազոտական և պլանային հիմնարկներին շարունակելու կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման մեթոդների ուսումնասիրությունը՝ դրանք հետագայում կատարելագործելու համար: Այդ առումով կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքի հաշվարկման մեթոդների մի քանի հարցերի նկատմամբ կատարած այս քննությունը թույլ է տալիս անելու հետևյալ համառոտ եզրակացությունները:

1. Կոլտնտեսային արտադրանքի ինքնարժեքը որոշելիս, երբ այն անհրաժեշտ է համապետական հարցերը (գների սահմանում, տնտեսության ճյուղերի մասնագիտացում) ճիշտ լուծելու համար, հաշվարկումը պետք է կատարել ըստ հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքի միջին վարձատրության, այսինքն սովխոզի բանվորների պայմանական միջին վարձատրության, նյութական ծախսումները գնահատվելու են ըստ արտադրանքի ինքնարժեքի:

2. Գյուղատնտեսության մթերքների ինքնարժեքը որոշելիս, երբ այն անհրաժեշտ է հենց իրենց՝ կոլտնտեսությունների համար, հաշվարկումները պետք է կատարել երկու եղանակով՝ ըստ սովխոզների բանվորների միջին աշխատավարձի՝ օգտագործելով կոլտնտեսությունների փաստաթղթերը աշխատանքի դուրս գալու լրիվ օրերի մասին և ըստ կոլտնտեսականների աշխատանքի փաստական վարձատրության՝ կոլտնտեսականներին տրված վճարի բնամթերային մասը հաշվի առնելով պետական մանրածախ գներով: